ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/08

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Մասնակից՝ «Դամկար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Դամկար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրերով գնանշման հարցում, գրասենյակային գույքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/762-2020 գրությամբ «Դամկար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.01.2020թ.-ի թիվ 07/19/265-2020 գրության հիման վրա, 23.01.2020թ.-ին «Դամկար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 23.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ:

03.02.2020թ.-ին և 11.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.02.2020թ.-ին:

2. <u>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարութունը 20.01.2020թ.-ի թիվ 07/19/265-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևայլը.

««ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Դամկար» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքվել է թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» գնման պայմանագիրը, որի շրջանակներում «Դամկար» ՍՊԸ-ն համաձայն վերոգրյալ պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պետք է մինչև 20.12.2019թ-ը մատակարարեր թվով 100 սեղան, որոնք սակայն չի մատակարարել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, եթե

մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք կամ խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» գնման պայմանագրի 2.1.7 կետը, 2020 թվականի հունվարի 16-ին որոշեց միակողմանի ամբողջությամբ լուծել վերոնշյալ պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Դամկար» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Դամկար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Դամկար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/762-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 03.02.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած հիմքերի համաձայն՝ Պատվիրատուի և Ընկերության միջև 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքվել է թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» գնման պայմանագիրը, որի շրջանակներում Ընկերությունը մինչև 20.12.2019թ.-ը պետք է մատակարարեր թվով 100 սեղան, որոնք սակայն չի մատակարարել: Եվ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ԴՀԱՊՁԲ-2019/8-2» գնման պայմանագրի 2.1.7 կետը, 2020 թվականի հունվարի 16-ին որոշել է միակողմանի ամբողջությամբ լուծել Պայմանագիրը:

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած գրավոր հիմքերը հայտնում ենք, որ առարկում ենք դրանց դեմ:

Գրավոր կարծիքի համար էական նշանակություն ունեցող փաստերը.

2019 թվականի դեկտեմբերի 10-ին Պատվիրատուի և Ընկերության միջև կնքվել է թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետև նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի թիվ 1 հավելվածի մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25 օրացույցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 20-ը Ընկերությունը պետք է մատակարարի Պատվիրատուին թվով 100 հատ սեղաններ:

Պայմանագրի թիվ 1 հավելվածում Պատվիրատուն սահմանել է հետևյալ դրույթները, «հաշվի առնելով, որ ապրանքների մատակարարումը կարող է տեղափոխվել 2020թ. (միևնույն ժամանակ պահպանելով 25 օրացույցային օրը), (...)»:

Պայմանագրի 2.1.7.-րդ կետի 2.1.7.1.-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ «2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 25 օրից ավելի,»:

Պատվիրատուն 2020 թվականի հունվարի 16-ին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) հրապարակել է Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցում:

Պատվիրատուի գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի ը. պարբերության համաձայն՝ «21. (...) պատասխանատու

ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ը. կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, (...) ժամկետը, (...), պետք է սահմանվեն ապրանքների (...) առնվազն 20, (...) օրացուցային օր: (...),»:

Կարգի 31-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «31. Գնահատող հանձնաժողովի (...) կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում (...) հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝

2) հրավերի տեքստը.»

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «Հրավերը պետք է պարունակի՝

7) պայմանագրի նախագիծը.»:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25 օրացույցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 20-ը Ընկերությունը պետք է մատակարարի Պատվիրատուին թվով 100 հատ սեղաններ:

Պայմանագրի թիվ 1 հավելվածում սահմանվել է հետևյալ դրույթները «հաշվի առնելով, որ ապրանքների մատակարարումը կարող է տեղափոխվել 2020թ. (միևնույն ժամանակ պահպանելով 25 օրացույցային օրը) . (...)»:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ «8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտադրությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:»:

Պայմանագրի 2.1-րդ մասի 2.1.7-րդ կետի 2.1.7.1-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ «2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 25 օրից ավելի,»:

Ըստ վերը նշված իրավական նորմերի, գնման գործընթացի շրջանակներում ապրանքների մազւակարարման պայմանագրով, ապրանքների մաւրակարարման ժամկեւրը պետք է սահմանվի առնվազն 20 օրացույցային օր: Այդ պահանջը հաշվի առնելով, Պատվիրատուն Պայմանագրով սահմանել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքները՝ սեղանները, Ընկերությունը պեւրք է մաւրակարարի Պաւրվիրատուին Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25 օրացույցային օրվա ընթացքում, ընդորում պայմանագրի համաձայն՝ Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, այսինքն՝ 2019 թվականի դեկտեմբերի 10-ից:

Նույն պայմանագրի համաձայն Պատվիրատուն Պայմանագիրը միակոմանի լուծելու իրավունք է ձեռքբերում երբ Ընկերությունը ապրանքների մատակարարման ժամկետը խախտել է 25 օրից ավելի:

Վերոգրյալից հետևում է, որ Պատվիրատուն պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունք կրող էր ձեռբերել միայն այն դեպքում, երբ Ընկերությունը Պայմանագրով նախատեսված ապրանքները Պատվիրատուին չմատակարարեր մինչև 2020 թվականի հունվարի 24-ն ներառյալ:

Վերը նշված հաշվարկը կարատարվել է հետևյալ կերպ՝ Պայմանագրի գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման համար սահմանված վերջնաժամկետ՝ մինչև 04.01.2020թ.-ն ներառյալ (11.12.2019թ.-ին + 25 օրացույցայի օր): (Քանի որ Պայմանագիրը ուժի մեջ է մտել 10.12.2019թ-ին իսկ ինչպես սահմանված է ՀՀ Քաղաքացիա Օրենսգրքի 327-րդ հոդվածով, «ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:»):

Եվ 04.01.2020թ-ին գումարած Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետով սահմանված 25 օրը, այդպիսով Ընկերությունը Պայմանագրիրը էական խախտող կարող էր համարվել, երբ ապրանքները Պատվիրատուին չմատակարարեր մինչև 2020 թվականի հունվարի 24-ն ներառյալ:

Ավելին, եթե հաշվի առնենք, որ 2020 թվականի հունվարի 4-ն (համաձայն «ՀՀ Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 1.1 -ին հոդվածների) ոչ աշխատանքային էր իսկ այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը նույն տարվա հունվարի 8-ն էր, ապա Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի բ) պարբերությամբ սահմանված 25 օրվա հաշվարկը պետք է կատարվեր 2020 թվականի հունվարի 8-ից:

Քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածի համաձայն՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Այդ դեպքում Պատվիրատուն պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունք կրող էր ձեռքբերել միայն, երբ Ընկերությունը Պայմանագրով նախատեսված ապրանքները Պատվիրատուին չմատակարարեր մինչև 2020 թվականի փետրվարի 2-ն ներառյալ:

Վերոգրյալից կարող ենք գալ այն եզրահանգման, որ Պատվիրատուն իրավունք չուներ 16.01.2020թ.-ին Պայմանագիրը միակողմանի լուծել Ընկերության հետ: Եվ չի համապատասխանում իրականությանը Պատվիրատուի այն պնդումը, որ Պայմանագրով նախատեսված ապրանքները Ընկերությունը պարտավոր էր մատակարարել մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ն:

Հարկ ենք համարում նաև անդրադառնալ Պայմանագրի թիվ 1 հավելվածի մատակարարման ժամանակացույցի այն մասին, համաձայն որի ապրանքները պետք է մատակարարվեն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ քան դեկտեմբերի 20-ն: Այս պայմանում նշված չէ, թե որ տարվա դեկտեմբերի 20-ի մասին է խոսքը գնում: Քանի որ ըստ վերը նշված հաշվարկի ապրանքների մատակարարման վերջնաժամկետը (առանց ներառելու կետանցի օրերը) 2020 թվականի հունվարի 04-ն էր իսկ ոչ աշխատանքային օրերը հաշվի առնելու դեպքում նույն տարվա հունվարի 8-ն էր, ապա կարող ենք եզրահանգել նրան, որ տվյալ պայմանը վերաբերվում է 2020 թվականի դեկտեմբերի 20-ին:

Բացի դրանից Պայմանագրի թիվ 1 հավելվածում Պատվիրատուն սահմանել է հետևյալ դրույթները, «հաշվի առնելով, որ ապրանքների մատակարարումը կարող է տեղափոխվել 2020թ. (միևնույն ժամանակ պահպանելով 25 օրացույցային օրը). (...)», դրանով իսկ Պատվիրատուն կանխատեսել է, որ Պայմանագրով նախատեսված ապրանքները հնարավոր է նաև մատակարարվեն 2020 թվականի ընթացքում, քանի որ հակառակ դեպքում ոչ միայն չի պահպանվի պայմանագրով նշված 25 օրացույցային օրվա ընթացքում ապրանքները մատակարարելու պայմանը, այլ նաև կխախտվի Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը. պարբերությամբ և 31-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, եթե հաշվի առնենք, որ Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն Ընկերությունը կարող է համարվել Պայմանագիրը էական խախտող ապրանքների մատակարարման 25 օրացույցային օր կետանց թույլ տալու դեպքում:

Ելնելով վերոգրյալից կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավական հիմքերը բացակայում են:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի և 50-րդ հոդվածի պահանջներով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Դամկար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2020/08 ծածկագրով, ընթացակարգը:»:

«Դամկար» ՍՊԸ-ն 11.02.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված թիվ «ԲՏԱՍ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից միակողմանի լուծելը <<Դամկար>> ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) բազմիցս Պատվիրատուին հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված ապրանքները պատրաստ են մատակարարելու համար և կարող են մատակարարվել: Սակայն Պատվիրատուն հրաժարվել է դրանք ընդունելուց պատճառաբանելով, որ չի կարող պահեստավորել, քանի որ տեղ չունի: Պատվիրատուի առաջարկությամբ վերջինիս հետ ձեռք է բերվել համաձայնություն, որ ապրանքները Պատվիրատուի կողմից կընդունվեն և ընդունվելուց հետո Պատվիրատուն այդ ապրանքները կհանձնի Ընկերությանը ի պահ, մինչև պահեստավորման համար տեղի հարցը լուծելը: Այդ պայմանավորվածությունը ձեռբերելուց հետո Ընկերությունը սպորագրել և Պատվիրատուին է հանձնել Պայմանագրով նախատեսված ապրանքների պահատվության պայմանագիր, որի նախագիծը տրամադրել էր Պատվիրատուն: Որից հետո Ընկերությունը դուրս է գրել հարկային հաշիվ:»:

4. <u>ՍՑ-LO-2020/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Դամկար» ՍՊԸ-ի միջև 10.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրերի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն: Սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքների վերջնաժամկետը՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25 օրացուցային օր, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 20-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 16.01.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ բարձր

տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Դամկար» ՍՊԸ-ի միջև 10.12.2019թ.-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից միակողմանի լուծվել է, հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.7 կետի պահանջները:

Բողոքներ քննող անձը 12.02.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/1903-2020 գրությամբ դիմել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը, որպեսզի վերջինս ներկայացնի դիրքորոշում «Դամկար» ՍՊԸ-ի կողմից 11.02.2020թ.-ին ներկայացված գրության վերաբերյալ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարութունը 18.02.2020թ. թիվ Մ-5978-2020 գրությամբ հայտնել է հետևայլը.

««ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Դամկար» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքվել է թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» գնման պայմանագիրը, որի շրջանակներում «Դամկար» ՍՊԸ-ն համաձայն վերոգրյալ պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պետք է մինչև 20.12.2019թ-ը մատակարարեր թվով 100 սեղան, որոնք սակայն չի մատակարարել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք կամ խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» գնման պայմանագրի 2.1.7 կետը, 2020 թվականի հունվարի 16-ին որոշեց միակողմանի ամբողջությամբ լուծել վերոնշյալ պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԲՏԱ նախարարության կողմից վերոնշյալ ընկերության հետ որևէ պահատվության պայմանագիր չի կնքվել:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/762-2020 գրությամբ «Դամկար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 25 օրից ավելի,

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում:

Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Դամկար» ՍՊԸ-ի միջև 10.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր, որի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ծավալները և հասցեն և վերջնաժամկետը, որը հաշվվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25 օրացուցային օր, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 20ը:

www.gnumner.am համացանցային կայքում 16.01.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Դամկար» ՍՊԸ-ի միջև 10.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից միակողմանի լուծվել են, հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.7 կետի պահանջները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Դամկար» ՍՊԸ-ի միջև 10.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» ծածկագրով գնման

պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրերի Հավելված 1-ով սահմանված ապրանքները Մասնակցի կողմից չեն մատակարարվել, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Դամկար» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 16.01.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 16.01.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Դամկար» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին

պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/762-2020 գրությամբ «Դամկար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/08 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Դամկար» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ